ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պատմ. գիտ. դոկտոր Լ. Հ. ԲԱԲԱՅԱՆ
Պատմ. գիտ. դոկտոր Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Հայ ժողովրդի բազմադարյան հարուստ պատմության հետազոտումը հայագիտության առաջատար բնագավառն է։ Դարերի ընթացքում նրանով զբաղվել են թե՛ հայ և թե՛ օտարազգի պատմաբան-բանասերները և հետագա սերունդներին թողել վիթխարի ժառանգություն։ Այսուհանդերձ ավելի քան 1500 տարվա անցյալ ունեցող հայ պատմագիտության զարգացման համար վերջին հիսուն տարին թե՛ իր ընդգրկման և թե՛ բովանդակության առումով շրջադարձային նշանակություն ունեցավ։

Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո հայագիտության առաջին օջախը և պատմաբան կադրերի պատրաստման հիմնական դարբնոցը դարձավ 1920 թ. դեկտեմբերին հիմնադրված Երևանի համալսարանի պատմա-գրական ֆակուլտետը։ Այստեղ իրենց գիտա-մանկավարժական բեղմնավոր գործունեությունը ծավալեցին ականավոր հայագետներ Հ. Մանանդյանը, Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, Լեոն, Խ. Սամվելյանը, Թ. Թորամանյանը, Աշ. Հովհաննիսյանը, Ա. Քալանթարը, Ա. Խաչատրյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը և ուրիշներ։

Համաշխարհային կուլտուրայի բնագավառում իրենց պատշաճ տեղը գրավող հայերեն ձեռագրերը կորստից փրկելու և նրանց պահպանման համար նորմալ պայմաններ ստեղծելու մեծ միջոցներ ու ջանքեր պահանջող աշխատանքները գիտական հիմքերի վրա դրվեցին միայն Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո։ ՀՍԽՀ հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 17-ի դեկրետով էջմիածնի մատենադարանը պետականացվեց։ 1921 թ. փետրվարին էջմիածնի մատենադարանի և թանգարանի բազայի վրա հիմնադրվեց առաջին գիտահետազոտական ինստիտուտը։ Այն անվանվեց Հայաստանի գիտական ինստիտուտ և դարձավ հայագիտության զարգացման կարևոր օջախ։ Վերը նշված հայագետներից շատերի հետ այդ ինստիտուտում իրենց ստեղծագործական աշխատանքները ծավալեցին անվանի հայագետներ Գ. Հովսեփյանը, Ե. Տեր-Մինասյանը, Ռ. Ջուբարյանը և ուրիշներ։

1925 թ. ապրիլին հանրապետությունում ստեղծվում է ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտը, որը 1930 թ. վերակազմվում է գիտությունների ինստիտուտի։

1932 թ. կազմակերպվեց կուլտուրայի պատմության ինստիտուտը, որի բազայի վրա 1935 թ. հիմնադրվեց ՀՍԽՀ լուսժողկոմատին կից պատմության

և գրականության ինստիտուտը։ Նույն թվականին հիմնադրվեց ՍՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալը (Արմֆան)։ Նրա կազմի մեջ մտավ նաև պատմության և գրականության ինստիտուտը, որը 1943 թ. դարձավ Հայաստանի նորաստեղծ գիտությունների ակադեմիայի ինստիտուտներից մեկը։ 1959 թ. պետական մատենադարանը վերածվեց գիտական հաստատության, ուր գիտական բարձր հիմքերի վրա դրվեց ձեռագրերի ուսումնասիրման ու հրատարակման գործը։

Սովետահայ պատմական գիտությունն անցել է զարգացման երեք փուլ։ Առաջին փուլն ընդգրկում է 1920-ական թթ. սկզբներից մինչև 1930-ական թթ. կեսերը։ Երկրորդը՝ 1930-ական թթ. կեսերից մինչև ՍՄԿԿ XX համագումարն ընկած տասնամյակները և երրորդը՝ XX համագումարից հետո ընկած ժամանակաշրջանը։

1920-ական թթ. սկզբից երիտասարդ սովետահայ պատմագրության մեջ լայն թափ ստացավ Հայաստանի հին և միջին դարերի պատմության առանձին պրոբլեմների ուսումնասիրությունը։ Սկզբնական շրջանում դրանով զբաղվում էին գերազանցապես պատմագրության հին սերնդի այն ներկայացուցիչները որոնք սովետական գիտությանը ծառայելու անկեղծ ցանկությամբ գաղափարական որոշակի շրջադարձ կատարելով, փորձեցին կանգնել պատմության մատերիալիստական ըմբռնման դիրքերում։ Նրանց գիտելիքները, գիտական-մանկավարժական աշխատանքի բազմամյա հարուստ փորձն ու հմտությունը սովետահայ երիտասարդ պատմագրության համար խիստ անհրաժեշտ էին։

Սովետահայ պատմագիտության առաջին և գլխավոր խնդիրն էր վերանայել ու վերագնահատել անցյալի հայ պատմագրության ժառանգությունը, նրանից վերցնել արժեքավորը, պայքար ծավալել պատմական մատերիալիզմին խորթ գաղափարների և կոնցեպցիաների դեմ, ապահովել մարքսիստական պատմագիտության հաղթանակը։ Սովետական պատմագիտության հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ 1928 թ. ստեղծված մարքսիստ-պատմաբանների ընկերությունը.

Եթե սովետահայ պատմագիտության զարգացման առաջին փուլում պատմաբանների ուշադրության կենտրոնում էին գերազանցապես ֆեոդալական ֆորմացիայի պրոբլեմները, ապա երկրորդ փուլում առաջին պլանի վրա դրվեց հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, Հայաստանի նախաֆեոդալական շրջանի հասարակության բնույթի, հին և միջնադարյան Հայաստանի պատմության պարբերացման հարցերի մշակումը։

* * *

Հայաստանի քաղաքական պատմության ուսումնասիրության բնագավառում հայ պատմագրությունն ունեցել է կայուն ավանդներ, մշակել է որոշակի կոնցեպցիաներ, որոնց հիման վրա և ստեղծվել է հարուստ պատմական գրականություն, բայց այդ նույնը չենք կարող ասել երկրի սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրության մասին։ Միայն սովետական իշխանության անցած 50 տարիների ընթացքում հայ ժողովրդի պատմության այդ խիստ կարևոր բնագավառի հետազոտությունը դրվեց պատմաբանների ուշադրության կենտրոնում։ Սովետահայ պատմաբանները, զինվելով մարքս-լենինյան գաղափարախոսությամբ, լայն գիտահետազոտական աշխատանք ծավալեցին և լուրջ հաջողությունների հասան Հայաստանի և հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական

պատմության բազմաթիվ պրոբլեմների գիտական խոր ու բազմակողմանի լուսաբանման ասպարեզում։

Սովետահայ պատմագրության զարգացման առաջին փուլում տիրապետող է եղել այն կոնցեպցիան, որ իբր Հայաստանում ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիան առաջացել է տոհմատիրական հարաբերությունների քայքայման հողի վրա։ Այս տեսության մեջ, որի հեղինակն է Ն. Ադոնցը, ֆեոդալիզմը դիտվում էր ոչ թե որպես արտադրության որոշակի եղանակ, այլ որպես քաղաքական և իրավական կազմակերպության որոշակի ձև, իսկ ըստ Խ. Սամվելյանի՝ հասարակական-քաղաքական հարաբերությունների մեխանիկական միակցություն։ Հին և միջնադարյան Հայաստանը համարվում էր «հավերժ ֆեոդալիզմի երկիր» (Խ. Սամվելյան, Լեո, մասամբ Հ. Մանանդյան)։ Այնուհանդերձ, Հ. Մանանդյանի և Խ. Սամվելյանի համապատասխան աշխատություններում[1] հանգամանորեն քննարկված են Հայաստանի ֆեոդալական հասարակության մի շարք կարևոր պրոբլեմներ։ Հ. Մանանդյանը հանգել է այն համոզիչ եզրակացության, որ հին Հայաստանում գոյություն է ունեցել և կարևոր դեր է խաղացել գյուղական համայնքը։ Միջնադարյան Հայաստանի հողատիրության կատեգորիաների ու հարկային ինստիտուտների, գյուղացիության սոցիալ-տնտեսական և իրավական վիճակի հարցերն իրենց լուսաբանումն են ստացել նաև Թ. Ավդալբեգյանի[2], Հ. Զորյանի[3] և Բ. Հարությունյանի[4] աշխատություններում։

Ավագ սերնդի ներկայացուցիչների կողմից, սակայն, հանգուցային մի շարք պրոբլեմների տրվում էր սխալ լուսաբանում, որը, բացի սուբյեկտիվ հանգամանքներից, 1930-ական թթ. ուներ նաև իր օբյեկտիվ պատճառները։ Այդ ժամանակ մարքսիստական պատմագրության մեջ ֆեոդալիզմի գարաշրջանի, նրա ծագման ու զարգացման օրինաչափությունները դեռ նոր-նոր էին սկսել ուսումնասիրվել ու լուսաբանվել, դեռևս որոշակի էր բուրժուական պատմագրության, հատկապես սուբյեկտիվ իդեալիզմի և տնտեսական մատերիալիզմի ազդեցությունը։ Դրանից բացի նշված ժամանակաշրջանում դեռ ոչ միայն Արևելքի, այլև Արևմտյան Եվրոպայի ֆեոդալականացման շատ պրոբլեմներ իրենց լուծումը չէին ստացել։

Մարքսիստական-լենինյան մեթոդոլոգիայով Հայաստանի ստրկատիրական և ֆեոդալական հասարակությունների սոցիալ-տնտեսական պատմության կարևորագույն պրոբլեմների մշակումը հիմնականում սկսվեց 1930-ական թվականների վերջերից։ Ս. Երեմյանը ֆեոդալիզմի առաջացումը կապեց մեր թվականության II—III դարերում ստրկատիրական հասարակարգի ճգնաժամի և գյուղական համայնքի տրոհման, կազմալուծման հետ, համոզիչ ձևով հիմ-

---

1 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934։ Նույնի՝ О торговле и городах Армении, Ереван, 1930. Նույնի՝ Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանական շրջանում, Երևան, 1926 և այլն։ Խ. Սամուելյան, Հայ հին իրավունքի պատմություն, հատ. 1, Երևան, 1930։

2 Թ. Ավդալբեգյան, Հաս, ստկ ու բաժ, Երևան, 1928։ Նույնի՝ Հայ շինականի և գեղջկուհու աշխատավարձը V դարում, Երևան, 1928 և այլն։

3 Հ. Զորյան, Արաբների հարկային քաղաքականությունը Հայաստանում, Երևան, 1934 և այլն։

4 Բ. Հարությունյան, Feod-ին և beneficium-ին համապատասխան տերմինները հայ միջնադարյան գրականության մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 4 և այլն։

նավորեց III դարում Հայաստանում ֆեոդալական արտադրաեղանակի վերջնական հաղթանակի դրությը[5]։

1940-ական թթ. վերջին և 1950-ական թթ. սկզբներին սովետահայ պատմաբանների ուժերով ստեղծված միջնակարգ դպրոցների դասագրքի և մի շարք կարևոր հարցերի նվիրված մենագրությունների և հոդվածների հրատարակումը և նրանց շուրջը ծավալված գիտական բանավեճերն ու քննարկումները նոր թափ հաղորդեցին հին և միջնադարյան Հայաստանի պատմության ուսումնասիրությանը։ Այս շրջանում քանակապես աճեց և ընդլայնվեց ուսումնասիրության թեմատիկան, բարձրացավ հրատարակվող աշխատությունների աղբյուրագիտական ու տեսական մակարդակը։ Դրան նպաստեց նաև այն կարևոր հանգամանքը, որ 1950-ական թթ. վերջերին Հայաստանի հին և միջնադարյան պատմության ուսումնասիրության բնագավառը համալրվեց երիտասարդ կարող ուժերով։

Եթե սովետահայ պատմագրության մեջ մինչև 1940-ական թթ. վերջերը մասնագետների ուշադրության կենտրոնում էր վաղ ֆեոդալիզմի պատմաշրջանի սոցիալ-տնտեսական պրոբլեմների ուսումնասիրությունը, ապա 1950-ական թթ. սկզբներից նրանց հետազոտությունները ծավալվեցին հիմնականում զարգացած ֆեոդալիզմի պատմաշրջանի պրոբլեմների շուրջը։

Հայաստանի միջնադարյան պատմությամբ զբաղվող հեղինակները (Աշ. Հովհաննիսյան, Ս. Երեմյան, Ս. Պողոսյան, Բ. Առաքելյան, Ս. Հակոբյան, Հ. Ութմաղյան և ուրիշներ) իրենց աշխատություններում[6] ցույց տվեցին, որ IX դ. սկզբում ֆեոդալական խոշոր իշխանությունների առաջացումը նշանավորել է վաղ ֆեոդալական քաղաքական մասնատվածության նոր փուլը և արդեն IX դարի վերջին և X դարում պայքարն ընթացել է նրանց միավորելու ու միասնական պետություն ստեղծելու ուղղությամբ, որը, սակայն, հաղթանակով չպսակվեց ներքին ու արտաքին մի շարք գործոնների պատճառով։ Նրանք փաստական հարուստ նյութի հիման վրա բացահայտեցին վաղ ֆեոդալիզմից զարգացած ֆեոդալիզմին անցման կոնկրետ ձևերը, վերջինիս հիմնական բնորոշ գծերը։

Սովետահայ պատմագրության մեջ մեծ աշխատանք է կատարված (և շարունակում է կատարվել) ֆեոդալական հողատիրության կատեգորիաների, ֆեոդալական ռենտայի ու հարկային ինստիտուտների, գյուղացիության շահագործման ձևերի ուսումնասիրության բնագավառում։ Երկար ժամանակ գիտական վիճելի հարցերից էր գյուղացիության ճորտացման պրոցեսի պարբերացումը։ Պետք է նշել, որ այս պրոբլեմի ուսումնասիրությունը նույնպես ապրել է երկու փուլ։ Հայտնի է, որ մինչև 1950-ական թթ. գերակշռող էր այն կոնցեպցիան, ըստ որի Հայաստանում վաղ ֆեոդալիզմի ժամանակներից հայ շինականը անձնական կախվածության մեջ է եղել և հողամրակցված, այլ խոսքով՝ ճորտացված (Հ. Մանանդյան, Ա. Ս. Սամվելյան, Լեո և ուրիշներ)։ Ի տարբերություն մյուսների, Հ. Մանանդյանը միաժամանակ նշել է, որ հին Հայաստանում գոյություն են ունեցել նաև ազատ գյուղացիներ։

---

5 «История СССР», ч. I и «Очерки истории СССР, III—IX вв.», М., 1939, 1953, 1958.

6 Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դարերում, Երևան, 1956։ Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հատ. 1—2, Երևան, 1954, 1957։ Հ. Ութմաղյան, Սյունիքը IX—X դդ., Երևան, 1958։

Հետագայում սովետահայ պատմաբանները, բացահայտելով զարգացած ֆեոդալիզմի պատմաշրջանի բնորոշ կողմերը, որոնք պայմանավորեցին հայ շինականի ֆեոդալական շահագործման ուժեղացման՝ նրա ճորտացման պրոցեսը, տվեցին ճորտատիրական ինստիտուտի զարգացման առանձին փուլերի պատկերը։ Այդ նոր պարբերացման համաձայն Հայաստանում գյուղացիության ճորտացման պրոցեսը հիմնականում սկսվել է IX դարից և իր խորացումն է ստացել XII—XIII դարերում, չհասնելով սակայն կլասիկ ճորտատիրության աստիճանի։ Այս տեսակետին են պատմաբաններ Ս. Երեմյանը, Աշ. Հովհաննիսյանը, Ս. Պողոսյանը, Բ. Առաքելյանը, Լ. Բաբայանը, Հ. Ութմազյանը և ուրիշներ։

Այսուհանդերձ, դեռևս անբավարար է Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի պատմաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության վիճակը։

Սովետահայ պատմագրության մեջ մինչև վերջերս անբավարար ուշադրություն է նվիրվել Հայաստանի XV—XVIII դարերի սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրությանը։ Այդ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական կյանքի առանձին հարցեր (գյուղական համայնքի, աշխարհիկ ու հոգևոր հողատիրության կատեգորիաների, ֆեոդալական ռենտայի, հարկային ինստիտուտների) լուսաբանված են Թ. Ավդալբեգյանի, Ս. Պողոսյանի, Բ. Հարությունյանի, Ս. Մարկոսյանի, Լ. Խաչիկյանի, Մ. Զուլալյանի, Հ. Փավազյանի աշխատություններում ու գիտական հոդվածներում։

Հայաստանի տնտեսական պատմությունը (սկսած հնագույն ժամանակներից մինչև XVIII դարի վերջը) շատ ընդհանուր ու համառոտ շարադրված է Հ. Թումանյանի աշխատության մեջ[7].

Արևելյան Հայաստանի XVI—XVIII դարերի ֆեոդալական հարաբերությունների պատմությունը հիմնականում լուսաբանել է Ի. Պ. Պետրուշևսկին[8]։

Որոշակի աշխատանք է կատարված հին և միջնադարյան քաղաքների ու բաղաքային կյանքի, առևտրի ու արհեստների ուսումնասիրության ուղղությամբ։ Ինչպես շատ հարցերի, այնպես էլ վերոհիշյալ պրոբլեմների ուսումնասիրության հիմքը դրել է Հ. Մանանդյանը[9]։ Նա հանգամանորեն քննարկել է հին և միջնադարյան Հայաստանի քաղաքների առաջացման հարցն ու նրանց զարգացման փուլերը։ Սակայն գերագնահատելով միջազգային առևտրի դերը, Հ. Մանանդյանը քաղաքային կյանքը, նրա աշխուժացումն ու զարգացումը, քայքայումն ու անկումը անմիջականորեն կապում է քաղաքների՝ միջազգային առևտրի մասնակցության աստիճանի, Հայաստանի վրայով անցնող առևտրական տրանզիտային ճանապարհների աշխուժացման կամ անկման հետ։

Միջնադարյան Հայաստանի քաղաքների ու նրանցում տեղի ունեցած սոցիալական պայքարի պատմության լուսաբանման ու բնութագրման գործում մեծ է Ն. Մառի և Հ. Օրբելու գիտական վաստակը[10]։ Ս. Երեմյանը ևս իր հոդ-

---

7 Հ. Թումանյան, Հայաստանի տնտեսական զարգացման պատմությունը, Երևան, 1960։

8 И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении XVI—начало XIX вв., Л., 1949.

9 Я. Манандян, О торговле и городах Армении..., II издание, Ереван, 1954; Նույնի՝ Հայաստանի քաղաքները X—XI դդ., Երևան, 1940։

10 Н. Я. Марр, Ани, Л.—М., 1934; И. А. Орбели, Армянский героический эпос, Ереван, 1956; Նույնի՝ Басни средневековой Армении, М.—Л., 1956; Նույնի՝ Избранные труды, т. I, Ереван, 1963 և այլն։

վածներից մեկում[11] անդրադարձել է հին Հայաստանի քաղաքներին և եկել է այն եզրակացության, որ նրանք ստրկատիրական բնույթ են ունեցել։ Դ. Սարգսյանը հելլենիստական Արևելքի քաղաքական կյանքի ընդհանուր ֆոնի վրա ուրվագծել է հին հայկական քաղաքային համայնքի նկարագիրը, նրա իրավական վիճակը պետության սիստեմում[12]։ Հին Հայաստանի քաղաքների զարգացման հարցերը քննարկված են նաև Ս. Երկյաշարյանի և Ա. Փերիխանյանի հոդվածներում։

Միջնադարյան Հայաստանի առանձին քաղաքների պատմության ուսումնասիրությանն են նվիրված Հ. Զորյանի, Ե. Ա. Շահազիզի, Ա. Մ. Շահնազարյանի, Կ. Գ. Ղաֆադարյանի աշխատությունները[13]։

Զարգացած ֆեոդալիզմի պատմաշրջանի ծագման ու զարգացման բազմաբովանդակ հարցերը հանգամանորեն լուսաբանված են Բ. Ն. Առաքելյանի երկհատորանոց աշխատության մեջ[14]։ Ֆեոդալիզմի դարաշրջանի Հայաստանի արհեստների ու համքարությունների պատմության ուսումնասիրության գործում Բ. Առաքելյանից բացի զգալի աշխատանք է կատարել Վ. Ա. Աբրահամյանը[15]։

Հայ ժողովրդի քաղաքական ամբողջական պատմության ուսումնասիրության գործը փաստորեն սկսվում է XVIII դարի վերջին տասնամյակներից, հայ նոր պատմագրության հիմնադիր Միքայել Չամչյանով։

Մ. Չամչյանից շուրջ մեկ ու կես դար հետո սովետահայ պատմաբան Լեոն առաջինը խիզախեց շարունակելու այդ դժվարին գործը։ Իր «Հայոց պատմություն» աշխատության երեք հատորներում նա շարադրեց հին և միջնադարյան Հայաստանի (բացառյալ XII—XV դդ.) քաղաքական պատմությունը։

Հայաստանի քաղաքական պատմության ուսումնասիրությունը (հնագույն ժամանակներից մինչև XVI դարը) գիտական կայուն հիմքերի վրա դրվեց սովետահայ պատմագրության ականավոր ներկայացուցիչ Հ. Մանանդյանի կողմից։ Այս ասպարեզում նրա առաջին խոշոր ուսումնասիրությունն էր Տիգրան II-ի ժամանակաշրջանին նվիրված մենագրությունը[16]։ Հ. Մանանդյանը ցույց տվեց, որ Հայաստանի զարգացումն ու հզորացումը, ինչպես նաև հելլենիստական ավանդների ներթափանցումն ու հելլենիստական տիպի քաղաքների առաջացումը ոչ թե Տիգրան II-ի քմահաճույքների հետ կապված պատահական երևույթներ էին, ինչպես կարծում են եվրոպական մի քանի պատմաբաններ, այլ պատմական անհրաժեշտություն, որ Տիգրանի պայքարը ոչ թե բարբարոսի ընդվզումն էր ընդդեմ Հռոմի քաղաքակիրթ ազդեցության, այլ, ընդհակառակը,

---

11 С. Т. Еремян, Развитие городов и городской жизни в древней Армении, ВДИ, 1953, № 3.

12 Г. Х. Саркисян, Тигранакерт. Из истории древнеармянских городских общин, М., 1960.

13 Հ. Զորյան, Արտաշատի, Վաղարշապատի և Դվինի պրոբլեմը, Երևան, 1935։ Ե. Շահազիզ, Հին Երևանը, Երևան, 1931։ А. Шахназарян, Двин, Ереван, 1946; Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1958 և այլն։

14 Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., Երևան, հատ 1, 1958, հատ. 2, 1964։

15 Վ. Ա. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ., Երևան, 1956։ Նույնի՝ Արհեստները և համքարային կազմակերպությունները Հայաստանում IX—XIII դդ., Երևան, 1946։

16 Հ. Մանանդյան, Տիգրան Բ և Հռոմը, 1940, նաև ռուսերեն, Երևան, 1943։

հելլենիստական աշխարհի և Հայաստանի կուլտուրական նվաճումների պաշտպանություն էր։ Հ. Մանանդյանը բացահայտեց Հռոմի կողմից մղվող պատերազմների գավթողական, իսկ հայերի կողմից մղվող պատերազմների պաշտպանողական, ազատագրական բնույթը։

Հ. Մանանդյանը եռհատոր քննական տեսության[17] մեջ իր ուշադրությունը կենտրոնացրել է քաղաքական պատմության առավել թերի լուսաբանված կամ բոլորովին չլուսաբանված հարցերի ու ժամանակաշրջանների վրա։ Նրա ծանրակշիռ ուսումնասիրություններն իրենց նշանակությամբ դուրս են գալիս ազգային պատմության շրջանակներից և մեծ ալ.ժեք են ներկայացնում Հին աշխարհի, Առաջավոր Ասիայի երկրների և հատկապես Անդրկովկասի ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար։ Սակայն քաղաքական պատմությունը լուսաբանելիս Մանանդյանը անհրաժեշտ ուշադրություն չի նվիրել սոցիալական ու ներդասակարգային բարդ հարաբերություններին։

Հայաստանի հին և միջին դարերի քաղաքական պատմության ուսումնասիրության գործը 1930-ական թթ. կեսերին նույնպես թևակոխում է նոր փուլ։ Մարքս-լենինյան պատմագրության նվաճումները և հայ բուրժուական պատմագրության ազդեցությունը հաղթահարելու գործում ձեռք բերած հաջողությունները Հայաստանում նախադրյալներ են ստեղծում հայ ժողովրդի քաղաքական պատմությունը մեթոդոլոգիական ճիշտ դիրքերից վեր հանելու և լուսաբանելու համար։

Հայաստանի հին և միջին դարերի քաղաքական պատմության գիտական խոր լուսաբանման ուղղությամբ 1940—1950 թթ. լուրջ աշխատանքներ են կատարում հայ միջնադարի պատմությամբ զբաղվող մասնագետները։ Ս. Երեմյանը, հենվելով պատմագրության նվաճումների վրա, մշակում է պատմության գիտական պարբերացումը և դրա հիման վրա տալիս է հին և միջնադարյան Հայաստանի պատմության ընդհանուր, բայց բովանդակալից շարադրանքը[18]։

Աշ. Հովհաննիսյանը իր «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» երկհատոր աշխատության մեջ լուսաբանում է քննարկվող հարցերն ընդգրկող ժամանակաշրջանների (բյուզանդական, արաբական, Բագրատունյաց թագավորության, մոնղոլական, պարսկական, թուրքական տիրապետությունների) քաղաքական իրադարձությունների պատմությունը, տալիս է նրանց ծնող սոցիալ-քաղաքական ու տնտեսական պատճառների վերլուծությունը, Արևելքի ու Արևմուտքի նկատմամբ հայ իշխող դասակարգի քաղաքական կողմնորոշման էությունը, այդ հողի վրա հարատև բնույթ ստացած ներքին հակամարտությունները, դավանաբանական պայքարը։ Հին և միջնադարյան Հայաստանի պատմությանը ընդհանուր ձևով անդրադարձել է Հ. Հարությունյանը[19]։ Հայաստանի արաբական տիրապետության շրջանի պատմությունը գրել է Ս. Մելիք-Բախշյանը[20]։ Արաբական տիրապետության շրջանի առանձին հար-

---

17 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա—Գ, Երևան, 1944—1952։

18 Տե՛ս «История СССР», ч. 1—4, М.—Л., 1939, «Очерки истории СССР. III—IX вв.» և «Очерки истории СССР, IX—XV вв.», М., 1958.

19 Հ. Հարությունյան, Հայաստանը Արշակունիների շրջանում, Երևան, 1940։ Նույնի՝ Հայաստանը Արաբական խալիֆայության տիրապետության շրջանում, Երևան, 1946։ Նույնի՝ Հայաստանը IX—XI դդ., Երևան, 1959։

20 Ս. Մելիք-Բախշյան, Հայաստանը VII—IX դդ., Երևան, 1968։

ցեր քննարկվել են Հ. Նալբանդյանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, բյուզանդական տիրապետության շրջանի որոշ հարցեր՝ Հ. Իարթիկյանի աշխատություններում, Սյունիքի IX—X դարերի պատմության լուսաբանմանն է նվիրված Հ. Ութմազյանի ուսումնասիրությունը։ Զարարյան ֆեոդալական ինքնավար իշխանության և մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանների քաղաքական պատմությունը լուսաբանված է Լ. Բաբայանի աշխատության մեջ[21]։ Այդ ժամանակաշրջանի պատմության առանձին հարցեր իրենց լուսաբանումն են ստացել Ս. Տեր-Ավետիսյանի և Հ. Ժամկոչյանի աշխատություններում։

Կիլիկյան հայկական պետության քաղաքական ու սոցիալ-տնտեսական պատմության հետազոտությանն է նվիրված Գ. Միքայելյանի մենագրությունը[22], որն առաջին ամբողջական ուսումնասիրությունն է Կիլիկյան Հայաստանի։ Կիլիկյան հայկական պետության քաղաքական պատմության մի քանի հարցեր քննարկված են նաև Ա. Գալստյանի և Ս. Բոռնազյանի ուսումնասիրություններում։

Միջնադարի ուսումնասիրման ասպարեզում սովետահայ պատմագրության նկատելի բացը Հայաստանի և հայ ժողովրդի XV—XVII դդ. պատմության լուսաբանման անբավարար վիճակն է։ Հրապարակի վրա չկան այդ դարերի քաղաքական պատմությանը նվիրված ամբողջական աշխատություններ։ Հ. Մանանդյանից հետո XV դարի քաղաքական ու սոցիալ-տնտեսական պատմության լուսաբանմամբ զբաղվել է Լ. Խաչիկյանը[23]։ Հայաստանի XVI—XVII դդ. քաղաքական պատմության միակ ամբողջական ուսումնասիրությունը Լեոյի «Հայոց պատմության» երրորդ հատորն է[24], որը զերծ չէ սխալներից։ Վերջին տարիներս հրատարակվեցին Մ. Զուլալյանի և Հ. Փափազյանի մի քանի ուսումնասիրությունները՝ նվիրված այդ դարերի քաղաքական պատմության առանձին հարցերին։

Նկատելի աշխատանք է կատարվել հին և միջնադարյան Հայաստանի ազատագրական պայքարի և սոցիալական շարժումների պատմության ուսումնասիրության բնագավառում։ Համեմատաբար լավ է ուսումնասիրված հայ ժողովրդի ազատագրական պայքարը մ. թ. ա. I դարում՝ Հռոմեական կայսրության, V—VI դդ. պարսկական տիրապետության և VIII—X դդ.՝ արաբական տիրապետության դեմ (Հ. Մանանդյան, Լեո, Ս. Երեմյան և ուրիշներ)։ Միջին դարերի հայ ազատագրական մտքի պատմությանն անդրադարձել է Աշ. Հովհաննիսյանը և իր «Դրվագների» երկհատորում հանգամանորեն լուսաբանել հայ ազատագրական մտքի ծագման ու զարգացման, նրա սոցիալական միջավայրի հետ կապված բազմապիսի հարցեր։

Հայ պատմաբանները զգալի աշխատանք են կատարել դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների համար դասագրքեր ստեղծելու ուղղությամբ։ 1943 թ. հրատարակվում է միջնակարգ դպրոցի ուսումնական

---

21 Լ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դդ., Երևան, 1964, նաև ռուսերեն, Մ., 1969։

22 Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952.

23 Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, Երևան, Ա մաս, 1955, Բ մաս, 1958, առաջարանները։

24 Լեո, Հայոց պատմություն, Երևան, 1946։

ձեռնարկի առաջին մասը[25]։ 1951 թ. ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտը հրատարակեց ուսումնական նոր ձեռնարկի առաջին մասը, որն ընդգրկում էր հնագույն շրջանից մինչև XIX դարն՝ընկած ժամանակաշրջանը[26]։ Այդ նույն ժամանակ լույս տեսավ Ս. Տ. Երեմյանի Հայաստանի պատմական ատլասը (առաջին հրատարակությունը)։ Բարձրագույն դպրոցի համար հայ ժողովրդի պատմության ուսումնական ձեռնարկ ստեղծելու նախաձեռնությունը պատկանում է Երևանի պետական համալսարանին։ 1958—1961 թթ. ընթացքում լույս տեսան յոթ պրակ։ Դրանցից հինգը[27] ընդգրկում են սկզբից մինչև XVIII դարի պատմությունը։ Հայ ժողովրդի պատմության ամբիոնի ջանքերով լույս տեսան հայ ժողովրդի պատմության բուհական դասընթացի չորս հատորները[28] Վ. Ա. Պարսամյանի ընդհանուր խմբագրությամբ։

Մի խումբ պատմաբաններ (Ս. Երեմյան, Ա. Ռ. Հովհաննիսյան, Մ. Հասրաթյան, Պ. Հարությունյան) ակտիվորեն մասնակցեցին «ՍՍՀՄ պատմություն» (1—4 մասեր, 1939 թ.) և «Ակնարկներ ՍՍՀՄ պատմության» (1953—1958 թթ.) գրքերի առանձին հատորների ստեղծմանը։ Վերջին հրատարակության մեջ Ս. Տ. Երեմյանը գրել է Հայաստանի III—XVII դդ. պատմության, ինչպես նաև Աղվանքի և մասամբ Վրաստանի պատմության բաժինները։

* * *

Հայաստանի նոր շրջանի պատմության հետազոտությունը կատարվել է սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական բազմաթիվ առանցքային հարցերի ուսումնասիրության ուղղությամբ, որոնցից ժամանակագրական առումով առաջինը հայ-ռուսական հարաբերությունների և ազատագրական շարժումների պրոբլեմն է։

Տակավին սովետական կարգերի հաստատման արշալույսին լույս տեսավ Ա. Գ. Հովհաննիսյանի հայերի ռուսական կողմնորոշման ծագմանը նվիրված ուսումնասիրությունը[29]։ Հեղինակը սովետահայ պատմագրության մեջ առաջինն էր, որ հրապարակեց ազատագրական շարժման կարևոր վավերագրեր և, քննադատելով տիրապետող տեսակետները, ցույց տվեց ռուսական կողմնորոշման դասակարգային էությունը։ Սակայն չափազանց տարվելով հարցի սոցիալական կողմով, նա ռուսական կողմնորոշման առաջացումը վերագրեց ա-

---

25 «Հայ ժողովրդի պատմություն», ձեռնարկ միջնակարգ դպրոցի համար, I մաս, խմբագիրներ՝ Մ. Գ. Ներսիսյան, Կ. Գ. Ղաֆադարյան, Երևան, 1943 թ.։

26 «Հայ ժողովրդի պատմություն», I մաս (հայերեն և ռուսերեն), խմբագիրներ՝ Բ. Ն. Առաքելյան, Մ. Ս. Հասրաթյան, Ա. Ռ. Հովհաննիսյան, Երևան, 1951, 2-րդ հրատ., Երևան, 1956, խմբագիրներ՝ Ս. Տ. Երեմյան, Բ. Ն. Առաքելյան, Մ. Ս. Հասրաթյան։

27 Հ. Գ. Ժամկոչյան, Հայաստանը նախնադարյան համայնական հասարակարգի և սարկատիրության էպոխայում, պրակ 1, 1961։ Ա. Ռ. Աբրահամյան, Հայաստանը վաղ ֆեոդալիզմի շրջանում, պրակ 2, 1959։ Ս. Մելիք-Բախչյան, Հայաստանը VII—IX դդ., պրակ 3, 1958։ Ս. Պ. Պողոսյան, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում, IX—XIII դդ., պրակ 4, 1958։ Նույնի՝ Հայաստանը XIII—XVII դդ., պրակ 5, 1960։

28 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 1, հեղինակներ Հ. Գ. Ժամկոչյան, Ա. Ռ. Աբրահամյան, Ս. Տ. Մելիք-Բախչյան, Երևան, 1964, հատ. 2, հեղինակ՝ Ս. Պողոսյան, Երևան, 1965, հատ. 3, հեղինակ՝ Վ. Պարսամյան, 1967, հատ. 4, հեղինակ՝ Շ. Հարությունյան, 1970։

29 Ա. Գ. Հովհաննիսյան, Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, էջմիածին, 1921։

վելի ուշ ժամանակաշրջանի։ Իր հետագա աշխատություններում[30] փաստական հարուստ նյութերի և նրանց քննական վերլուծման հիման վրա, ինչպես նաև Հուշվի առնելով սովետահայ պատմագրության նվաճումները, Ա. Գ. Հովհաննիսյանը հանգամանորեն մշակեց ազատագրական շարժման գաղափարախոսության, նրա քաղաքական ուղղվածության, սոցիալ-դասակարգային էության հարցերը։ Հատկապես քննության առնելով Իսրայել Օրու գործունեությունը, նրա քաղաքական դեգերումները Արևմտյան Եվրոպայում և վճռական ու անվերադարձ շրջադարձը դեպի Ռուսաստան, Ա. Գ. Հովհաննիսյանը գտնում է, որ Հայաստանը Ռուսաստանի օգնությամբ ազատագրելու իրական հիմքեր ունեցող կողմնորոշումը վերջնականապես ձևավորվում է XVIII դ. սկզբներին, Պետրոս I-ի օրոք ռուսական ինքնակալության հզորացման շրջանում, թեև այն աստիճանաբար հասունացել ու նախապատրաստվել էր նախորդ դարերի ընթացքում։

Վ. Կ. Ոսկանյանը, կռվան դարձնելով դեռևս XVI—XVII դարերի Մոսկովյան պետության և հայերի առևտրական, կուլտուրական և քաղաքական կապերը հավաստող տվյալները, հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ձևավորումը դիտում է ավելի վաղ շրջանում՝ XVII դ. երկրորդ կեսում[31]։ Բավականաչափ լուսաբանվել են XVIII դարի առաջին երեսնամյակում Անդրկովկասում ստեղծված քաղաքական իրադրությունը, ազատագրական պայքարի առանձին դրվագները, նրա ղեկավարների գործունեությունը[32]։

XVIII դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժումները և հայ-ռուսական հարաբերությունները հանգամանորեն քննարկվել են Ա. Ռ. Հովհաննիսյանի մենագրություններում[33]։ Հեղինակը իրեն հետաքրքրող ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական կյանքի ընդհանուր ֆոնի վրա լուսաբանել է ազատագրական շարժման նշանավոր դեմքերից Հովսեփ Էմինի գործունեությունը, ազատագրական նրա ծրագիրը, նրա կապը հայ իրականության հետ։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու ակտը հայ ժողովրդի պատմական ճակատագրի տեսակետից շրջադարձային նշանակություն ունեցավ, ուստի և նրա ուսումնասիրությունը եղել է և շարունակում է մնալ պատմաբանների ուշադրության կենտրոնում, որպես հայ ժողովրդի պատմության հանգուցային հարցերից մեկը։

---

30 Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Բ, Երևան, 1959։

31 Վ. Ոսկանյան, Հայ-ռուսական հարաբերությունները XVII դարում։ Նույնի՝ Проблема возникновения русской ориентации в советской историографии (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1948, № 1, 1958, № 4), XVII դարի վերջերի և XVIII դարի սկզբի ազատագրական շարժումների մասին տե՛ս նաև Հ. Հարությունյան, Իսրայել Օրի, Երևան, 1945։

32 П. Т. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII в., М., 1954։ Ա. Միրզոյան, Հայ ազատագրական շարժումները Սյունիքում (1722—1730 թթ.), Հայաստանի պետական պատմական թանգարանի «Աշխատություններ», հատ. 3, 1949։ Ա. Գ. Արրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953։ Վ. Ա. Պարսամյան, Լեհահայերի մասնակցությունը Դավիթ բեկի ապստամբությանը (փաստաթղթերի ժողովածու), Երևան, 1962։

33 А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, Ереван, 1945; Նույնի՝ Россия и Армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1947.

Այս պրոբլեմի մշակումը, փաստորեն, կատարվել է ետպատերազմյան շրջանում։ XVIII դ. վերջերի և XIX դ. առաջին կեսի Արևելյան Հայաստանի պատմական զարգացման պրոցեսի հետազոտման հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով նրա զարգացման հեռանկարները, այդ հարցերով զբաղվող մասնագետները ցույց տվեցին, որ պատմական այդ ակտի շնորհիվ արևելահայությունը ազատվեց ֆիզիկական բնաջնջման վտանգից, համեմատաբար լավ պայմաններ ստեղծվեցին հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և կուլտուրական առաջադիմության համար։ Ուրիշ խոսքով, իր բախտը կապելով ռուս ժողովրդի հետ, արևելահայությունը հուսալի հեռանկարներ ստացավ, իսկ հայ ժողովրդի արևմտյան հատվածի պատմական բախտը շարունակեց ընթանալ ծանր ու ողբերգական ուղիով։

Ճիշտ գնահատական տալով բախտորոշ նշանակություն ունեցող այդ իրադարձություններին, մասնագետներն այս պրոբլեմի ուսումնասիրությունը ամրողջացնելու նպատակով միաժամանակ անդրադառնում էին նրա առանձին կողմերի բացահայտմանը։ Լուսաբանվեցին Ա. Ս. Գրիբոյեդովի դերը[34] 1820-ական թթ. հայ-ռուսական հարաբերություններում, դեկաբրիստների գործունեությունը Հայաստանում, ժամանակակիցների տված գնահատականներն ու իրարամերժ կարծիքները Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու հարցում[35]։ Պարզաբանվել են նաև ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին հայերի մասնակցության և հայ ու ռուս ժողովուրդների ռազմական համագործակցության հարցերը[36], Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուն նախորդող շրջանում Անգլիայի ու Ֆրանսիայի ծավալած պայքարն ու դիվանագիտական բանսարկությունները Ռուսաստանի արևելյան քաղաքականության դեմ, Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական ձգտումները[37] և այլն։

Հայաստանի նոր շրջանի պատմության սոցիալ-տնտեսական հարաբերությունների և կապիտալիզմի առաջացման ու զարգացման ուսումնասիրությունը փաստորեն սկսվել է 1940-ական թթ. երկրորդ կեսից։ Ետպատերազմյան շրջանում պատմաբանները լրջորեն սկսեցին զբաղվել առաջին հերթին Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի և կապիտալիզմի առաջացման պրոբլեմների հետազոտման խնդրով։ Այս բնագավառում, մասնավորապես գյուղացիության պատմության հարցերի ուսումնասիրման գործում մեծ վաստակ ունի Վ. Ռշտունին[38]։

Արևելյան Հայաստանում, հատկապես հայկական գյուղում, գյուղացիական շարժումների, կապիտալիստական հարաբերությունների զարգացման և շատ այլ հարցեր խոր ու համակողմանի քննարկվել են պատմաբանների և տնտե-

---

34 Վ. Ա. Պարսամյան, Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947։

35 М. Г. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. I, II, Ереван, 1956, 1961։ Նույնի՝ Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958։

36 Զ. Տ. Գոհգորյան, Ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցությունը XIX դ. սկզբին, Երևան, 1957։

37 А. Р. Иоаннисян, Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958.

38 В. Рштуни, Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1947; Նույնի՝ Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, Երևան, 1960։

սագետների հետազոտություններում (Հ. Թումանյան, Մ. Ադոնց, Ա. Համբարյան, Հ. Ավդալբեկյան, Ս. Մարկոսյան, Ա. Մարուխյան, Օ. Հովհաննիսյան, Ա. Պողոսյան և ուրիշներ)։

Նույնը չի կարելի ասել Արևմտյան Հայաստանի մասին։ Մինչև վերջերս Հայաստանի արևմտյան մասի տնտեսական կյանքի ուսումնասիրությունը սահմանափակվում էր սոսկ ամսագրային հոդվածներով, էլ չենք խոսում այն մասին, որ տնտեսագետները տակավին խոպան են թողել Արևմտյան Հայաստանի պատմությունը։

Սովետահայ պատմագրության զարգացման երրորդ փուլում՝ 1950-ական թթ. երկրորդ կեսից հետո է սկսվում Հայաստանի արևմտյան հատվածի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությունը։ Ե. Սարգսյանի, Ա. Համբարյանի, Հ. Ղազարյանի մենագրություններում[39] փաստական հարուստ նյութերի հիման վրա բացահայտվել են Արևմտյան Հայաստանի նոր շրջանի հողային հարաբերությունները, այնտեղ իրականացվող վարչա-տնտեսական ռեֆորմները, հայ բնակչության հարկային պարտավորությունները, նրա սոցիալական վիճակը և այլ հարցեր։ Այսուհանդերձ անհրաժեշտ է նշել, որ դեռևս շատ բան կա անելու Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր կողմերը ուսումնասիրելու բնագավառում։

Սովետահայ պատմագրության տեսադաշտում է եղել նաև նոր շրջանի կարևորագույն պրոբլեմներից մեկի՝ XIX դ. երկրորդ կեսին թուրքական բռնակալության դեմ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների և հասարակական-քաղաքական հոսանքների պատմության մշակումը։

Դեռևս Լևոն իր փաստալից աշխատություններում[40] ներկայացրել էր արևմտահայերի ծանր վիճակը, ազատագրական շարժման դրվագներն ու հայկական հարցի անցած ուղին։ Սակայն նա, տուրք տալով ժամանակին տարածում գտած գռեհիկ սոցիոլոգիական տեսությանը, մի շարք հարցերում հանգել է սխալ եզրակացությունների։

XIX դ. երկրորդ կեսի ազատագրական շարժման դիտական ուսումնասիրության ուղղությամբ սովետահայ պատմագրությունը խոշոր առաջընթաց է կատարել վերջին երկու տասնամյակներում։ Այս տեսակետից կարևոր է հատկապես Մ. Գ. Ներսիսյանի մենագրության[41] նշանակությունը։ Նա առաջինը քննադատեց անցյալի հայ պատմագրության ժխտողական տեսակետները ազգային-ազատագրական շարժումների խնդրում և ցույց տվեց այդ շարժումների առաջադիմական, ժողովրդական և միաժամանակ սոցիալ-դասակարգային բնույթը, թուրքական բռնակալության դեմ պայքարի նրա զարգացման տարբեր փուլերը։ Մ. Գ. Ներսիսյանը արևմտահայ ազգային շարժումները ներկայացրել է համընդհանուր կապի մեջ։

---

39 Е. К. Саркисов, Аграрная политика Османской империи в Западной Армении во II половине XIX в., Ереван, 1957; Ա. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914 թթ.), Երևան, 1965։ Հ. Մ. Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., Երևան, 1967։

40 Լևոն, Անցյալից, Թիֆլիս, 1925։ Նույնի՝ Թուրքահայ հեղափոխության դաղափարախոսությունը, հատ. Ա, Բ, Փարիզ, 1934, 1935։

41 Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ (1850—1870 թթ.), Երևան, 1953։

Ազատագրական շարժման փայլուն դրվագներից մեկի, Զեյթունի 1862 թ. հերոսական ապստամբության, ինչպես նաև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի, արևմտահայության սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր վիճակի և հայկական հարցի պատմությունը գիտական լուսաբանում են ստացել մի շարք այլ աշխատություններում[42]։

Ազգային-ազատագրական շարժումների հետ սերտորեն կապված է նրա գաղափարախոսության, ժամանակի հասարակական-քաղաքական հոսանքների հարցը։ Այս ասպարեզում սովետահայ պատմագրությունը նշանակալից քայլեր է կատարել տակավին 30-ական թթ. կեսերից։ Ի հակակշիռ Լենյի անընդունելի տեսակետների, Ա. Գ. Հովհաննիսյանը մոտեցավ Մ. Նալբանդյանի կրական ժառանգությանն ու գործունեությանը հակառակ ծայրից։ Նա հրատարակեց Նալբանդյանի մի քանի անտիպ երկերը ընդարձակ մեկնաբանություններով ու ծանոթագրություններով, որոնց մեջ ցույց է տրվում նրա տեղն ու դերը հայ հասարակական մտքի պատմության մեջ։ Երկու տասնամյակ անց Ա. Գ. Հովհաննիսյանը երկու ծավալուն հատորով հրապարակեց Մ. Նալբանդյանի և նրա ժամանակի հասարակական-քաղաքական հոսանքների պատմությանը նվիրված իր ուսումնասիրության արդյունքները[43]։

Սովետահայ պատմագրության զարգացման երրորդ փուլում մշակվել են Արևելյան և Արևմտյան Հայաստանի ազգային-ազատագրական շարժումների և հասարակական հոսանքների պատմության այլևայլ հարցեր։

Ուսումնասիրվել են նաև ետռեֆորմյան շրջանում Արևելյան Հայաստանում գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների զարգացման ուղիների հարցում լիբերալ-բուրժուական և դեմոկրատական-նարոդնիկական հոսանքների ներկայացուցիչների սոցիալ-տնտեսական ու քաղաքական հայացքները[44]։

Անդրկովկասի նարոդնիկական խմբակների այդ տասնամյակների գործունեությունը և մասնավորապես նրանց վրա ազգային-ազատագրական շարժումների ազդեցությունը լուսաբանվել է Մ. Ներսիսյանի տակավին 1940 թ. հրատարակված աշխատության մեջ[45]։ Քննարկվել է նաև 1860—1880-ական թթ. Անդրկովկասում և Հայաստանում կազմակերպված ազգային-դեմոկրատական և նարոդնիկական խմբակների գործունեությունը[46]։

XIX դ. վերջը և XX դ. առաջին երկու տասնամյակը հայ ժողովրդի համար հասարակական-քաղաքական բուռն իրադարձություններով հարուստ մի շրջան էր։ Դա ամենից առաջ վերաբերում է անցյալ դարի վերջերին հայ իրակա-

---

42 Վ. Գ. Մելիքսեթյան, Զեյթունի հերոսամարտերը, Երևան, 1960։ Ռ. Փ. Հովհաննիսյան, Արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965։ Խ. Բաղալյան, Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում 1878 թթ., Երևան, 1965։ Հ. Պողոսյան, Զեյթունի պատմությունը, Երևան, 1969։

43 Ա. Գ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, 2, Երևան, 1955, 1956։

44 Վ. Ռշտունի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից (XIX դ. II կես), Երևան, 1956։

45 Մ. Ներսիսյան Նարոդնիկական կազմակերպությունները Անդրկովկասում, Երևան, 1940։

46 Գ. Զարաջյան (Ս. Տ. Արկոմեդ), Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում, Թիֆլիս, 1927։

նության մեջ նոր դաղափարախոսության՝ մարքսիզմի թափանցմանը, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջացմանը և Հայաստանում հեղափոխական շարժումների տարածմանը:

1920-ական թթ. սկսած առանձին գրքույկների ու հոդվածների ձևով լույս են տեսել մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունների և առաջին հերթին «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» հայերեն հրատարակությունների, լենինյան «Իսկրան» Հայաստանում տարածվելու, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջացման և այլ հարցերի մասին ուսումնասիրություններ (Ռ. Ավդալբեգյան, Գ. Ղարաջյան, Վ. Ավետիսյան, Լ. Աբրահամյան և ուրիշներ)։ Վերջին տարիներին Խ. Բարսեղյանի[47] և այլոց կողմից աշխատանքներ են կատարվել մարքսիզմի առաջացման դաղափարական ակունքները բացահայտելու տեսակետից։

XX դ. առաջին տասնամյակների առանցքային հարցերից է բանվոր դասակարգի ձևավորման և հեղափոխական շարժումների ծավալման պատմությունը։ Մինչև 1950-ական թթ. կեսերը այս բնագավառում կատարվող աշխատանքները գոհացուցիչ չէին և պատահական բնույթ էին կրում։ Այդ շրջանում գրվել են միայն առանձին հոդվածներ, հիշողություններ ու գրքույկներ, որոնց մեջ հիշատակության արժանի է Եր. Մելիք-Յոլչյանի աշխատությունը[48]։

Հայաստանի հեղափոխական շարժումների առանձին հարցեր լուսաբանվել են պատմա-հեղափոխական և պատմա-կուսակցական թեմաներով գրված գրականության մեջ։

1955 թ., ռուսական առաջին հեղափոխության հիսնամյակի տոնակատարությունը, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ ազգային հանրապետություններում նոր թափ հաղորդեց այդ ուղղությամբ կատարվող աշխատանքներին։ Ս. Աղայանը, Վ. Պարսամյանը, Ա. Հարությունյանը, Գ. Հարությունյանը, Հ. Մելիքյանը, Դ. Մուրադյանը և շատ ուրիշներ հրատարակեցին 1905—1907 թթ. հեղափոխությանը նվիրված ուսումնասիրություններ, հրապարակ եկան հոդվածների ժողովածուներ։

Նկատելի աշխատանքներ են կատարվել նաև առաջին համաշխարհային պատերազմը և հայ ժողովրդի քաղաքական վիճակը պրոբլեմի մշակման ուղղությամբ։ Վերջին տասնամյակում պատմաբաններ Ե. Սարգսյանը, Ջ. Կիրակոսյանը, Մ. Արզումանյանը, Ա. Մնացականյանը, Ս. Հակոբյանը, Հ. Թուրշյանը և ուրիշներ զբաղվեցին այդ պրոբլեմով և հրատարակեցին մի շարք մենագրություններ[49], հոդվածներ ու փաստաթղթեր։

---

47 Խ. Բարսեղյան. Մարքսիզմի տարածումը Հայաստանում (1880—1904), մաս 1, Երևան, 1967։

48 Եր. Մելիք-Յոլչյան, Հայաստանի բանվորական շարժման պատմությունից, 1903—1907, Երևան, 1930։

49 Ե. Ղ. Սարգսյան, Օսմանյան Թուրքիայի նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ու նրա տարիներին, Երևան, 1965։ Ջ. Ս. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965։ Ա. Մ. Մնացականյան, Հայ ժողովրդի ոգեկրթությունը, Երևան, 1965։ С. М. Акопян, Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны, Ереван, 1967։ Մ. Վ. Արզումանյան, Հայաստանը 1914—1917 թթ., Երևան, 1969։ Հ. Թուրշյան, Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1969։

Ստեղծված գրականության մեջ հատկապես ուշադրավ է Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ հրատարակված փաստաթղթերի ու նյութերի ժողովածուն[50]։ Նրանում համոզիչ փաստերով ցույց է տրվում թուրքական կառավարող շրջանների կողմից հայկական ջարդերը կազմակերպելու կանխամտածված քաղաքականությունը և հրեշավոր ու անմարդկային ձևերով այդ քաղաքականության կենսագործումը։

Հայաստանի կապիտալիզմի դարաշրջանի պատմության համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն ընձեռեց ամբողջացնող աշխատություն ստեղծելու։ 1957 թ. ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտը հրատարակեց 1801—1917 թթ. պատմությունն ընդգրկող ձեռնարկ միջնակարգ դպրոցի համար[51]։ Այնտեղ, թեկուզ և համառոտ ձևով, լուծվել են պատմական զարգացման տարբեր փուլերի բնորոշման, նրա ւյարբերացման հետ կապված շատ կնճռոտ հարցեր։ Նույն ժամանակաշրջանի պատմությունը ավելի մանրամասնությամբ տրված է Վ. Պարսամյանի հրատարակած բուհական ձեռնարկում[52]։

Այսպիսով, ակներև են հաջողությունները Հայաստանի նոր պատմության ուսումնասիրության բնագավառում։ Սակայն կան նաև մի շարք հարցեր, որոնք բավարար չափով չեն հետազոտվել, խնդիրներ, որոնք դեռևս բանավեճեր են հարուցում և գիտական համոզիչ հետևությունների հանգելու համար կարիք ունեն լրացուցիչ հետազոտման։ Այսպես, օրինակ, թույլ ու անբավարար են լուսաբանված XVIII դ. վերջերի և XIX դ. սկզբների Արևմտյան Հայաստանի ազատագրական շարժումները, 1880—1890-ական թթ. հրապարակ եկած ազգայնական կուսակցությունների առաջացման, նրանց դասակարգային էության ու հետագա էվոլյուցիայի հարցերը, XX դ. սկզբներին ծավալված ազգային-ազատագրական շարժումները, հայ ազգային բուրժուազիայի պատմությունը, ինչպես նաև չկա նախասովետական շրջանի բանվոր դասակարգի ձևավորման ու զարգացման պատմությունը։

* * *

Հայ ժողովրդի պատմության ետհոկտեմբերյան ժամանակաշրջանի ուսումնասիրությունը մշտապես եղել է սովետահայ պատմագրության ուշադրության կենտրոնում։

Ինչպես և պետք էր սպասել, հետազոտողներին ամենից առաջ զբաղեցրել է հայ ժողովրդի կյանքում շրջադարձային նշանակություն ունեցող իրադարձության՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման ու բաղաքացիական կռիվների պատմությունը։

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից մինչև 1921 թ. դաշնակցական փետրվարյան խռովության վերացումն ու սովետական կարգերի ամրապնդումը, ընդամենը չորս տարի ընդգրկող, սակայն սոցիալ-քաղաքական բուռն իրադարձություններով առլեցուն պատմությունը կամ նրա առանձին հարցերի ուսումնասիրությունը սկսվել է դեռևս 1920-ական թթ.։ Նրա առաջին ուսումնասիրողները եղել են հիշատակված անցքերի անմիջական մասնակիցները (Ա.

50 «Геноцид армян в Османской империи», Сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1966.

51 «Հայ ժողովրդի պատմություն», II մաս, խմբագրությամբ Մ. Ներսիսյանի և Վ. Պարսամյանի, Երևան, 1957։

52 Վ. Պարսամյան, Հայ ժողովրդի պատմություն, հատ. 3, Երևան, 1967։

Գ. Հովհաննիսյան, Ա. Կարինյան, Բ. Բորյան, Շ. Ամիրխանյան, Թ. Մանդալյան և ուրիշներ), որոնք թարմ տպավորությունների տակ վերլուծել ու արժեքավորել են սովետական կարգերի հաստատման հետ կապված հարցերը։

Սովետահայ պատմագրության զարգացման առաջին փուլում առանձնապես շատ գրվեց Մայիսյան ապստամբության մասին[53]։ Հրապարակ եկած գրականությունը մեծապես նպաստեց սովետական իշխանության համար մղվող պայքարում Մայիսյան ապստամբության տեղն ու դերը բնորոշելու և հիմք հանդիսացավ հետագա ուսումնասիրությունների համար։

Հայաստանում սովետական իշխանության հաստատման հարցի մշակման կապակցությամբ ուսումնասիրվեց նաև դաշնակցական կուսակցության քաղաքականությունը։ Այդ հարցերին են նվիրված 1920-ական թթ. հեղափոխական գործիչների գրած աշխատությունները[54]։

Այդ նույն շրջանում զգալի աշխատանք է կատարվում 1921 թ. փետրվարին սկսված քաղաքացիական կռիվների ուսումնասիրման ուղղությամբ[55]։

1930-ական թթ. արդեն սովետական իշխանության հաղթանակի պրոբլեմին անդրադառնում են սովետական երիտասարդ պատմաբանները[56]։ Նրանց աշխատություններում արխիվային փաստաթղթերի ու այլ նյութերի հիման վրա փորձ է արվում առավել հանգամանորեն ներկայացնել Հայաստանում սովետական կարգերի հաստատման հետ կապված անցքերը։

Հայրենական պատերազմի ավարտից հետո պատմաբանները ձեռնամուխ են լինում սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարի և քաղաքացիական կռիվների պատմության խոր ու համակողմանի ուսումնասիրմանը[57]։ Սակայն այդ տարիներին հրատարակված գրականությունը որոշ չափով կրում էր, և չէր կարող չկրել, անհատի պաշտամունքի հետևանքով պատմագիտության մեջ ստեղծված սխեմատիզմի ու դոգմատիզմի կնիքը։

---

53 Ա. Գ. Հովհաննիսյան, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, Երևան, 1923։ Շ. Ամիրխանյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920), դնահատության փորձ, Մոսկվա, 1926։ Թ. Մանդալյան, Մայիսյան ապստամբությունը, Երևան, 1929։ Ա. Մելիք-Շահնազարյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, Երևան, 1930։ Ա. Խանջյան, Մայիսյան ապստամբությունից դեպի նոյեմբերյան հաղթանակը, Երևան, 1935 և այլ աշխատություններ ու հոդվածներ։

54 Ա. Կարինյան, Դաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, 1926։ Նույնի՝ Հայ ազգայնականների ուղին, Մոսկվա, 1926։ Ա. Հովհաննիսյան, Համազգային կրիզիսը, Երևան, 1926։ Նույնի՝ Դաշնակցության առթիվ, Մոսկվա, 1929։

55 Ա. Բաղդասարյան, Քաղաքացիական կռիվները Հայաստանում, Երևան, 1928։ Գ. Օգանեզով, Կարմիր արշավանք, Երևան, 1930։ Օ. Վարդանյան, Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, Երևան, 1931 և այլն։

56 Վ. Պարսամյան, Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում, Երևան, 1932։ Մ. Ներսիսյան, Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում, Երևան, 1935։

57 Ա. Հակոբյան, Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թ., Երևան, 1948։ Խ. Բաղալյան, Անգլո-ամերիկյան գիշատիչ իմպերիալիզմի նվաճողական քաղաքականությունը Հայաստանում 1919—1920 թթ., Երևան, 1951։ Ա. Մնացականյան, Հայ ժողովրդի պայքարի պատմությունից ընդդեմ ամերիկյան նվաճողների և նրանց գործակալների, Երևան, 1953։ Գ. Ղարիբջանյան, Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունները 1917—1920 թթ., Երևան, 1953։ А. Эльчибекян, Установление Советской власти в Армении, Ереван, 1954։ Ս. Կարապետյան, Զինված ապստամբությունը Լոռում 1921 թ., Երևան, 1954 և այլն։

XX համագումարը, ինչպես հայտնի է, պատմական նշանակություն ունեցավ գաղափարական ամբողջ աշխատանքների և հատկապես պատմագիտության զարգացման համար։ Շուտով երևան են գալիս նոր հետազոտություններ, որոնք գրված են թարմ շնչով, բոլոր տեսակի, այդ թվում նաև առաջներում անտեսված փաստերի ու երևույթների վերագնահատությամբ։ Հայտնի փաստերի քննարկման և արխիվային նոր նյութերի շրջանառության մեջ գնելու միջոցով հետազոտողների մի մասը լուսաբանեց 1917—1921 թթ. անցքերը ամբողջությամբ։ Այս առումով կարևոր են Ծ. Աղայանի, Գ. Ղարիբջանյանի, Գ. Գալոյանի, Հ. Էլչիբեկյանի, Ս. Կարապետյանի, Ս. Վարդանյանի և ուրիշների մենագրությունները[58]։

Մյուս կարգի աշխատություններում քննարկվել են Հայաստանում սովետական կարգերի հաստատման ու քաղաքացիական կռիվների պատմության պրոբլեմի առանձին կողմերը։ Այսպես, օրինակ, հանգամանորեն վեր են հանվել Մայիսյան ապստամբության նշանակությունը, նրա ընթացքը և պարտության պատճառները[59]։

Հետազոտողների մեկ այլ խումբ՝ Ա. Հակոբյանը, Ս. Սողոմոնյանը և ուրիշներ, իրենց աշխատություններում բացահայտել են քաղաքացիական կռիվների հիմնական փուլերը, ցույց տվել Հայաստանի աշխատավորության ու կարմիր բանակի հերոսական պայքարը սովետական իշխանությունը վերականգնելու ու ամրապնդելու համար։

Առանձին մենագրություններում վեր են հանվել Վ. Ի. Լենինի դերը հայ ժողովրդի սոցիալիստական վերածնության գործում, Սովետական Ռուսաստանի և ռուս ժողովրդի անշահախնդիր տնտեսական ու ռազմական օգնությունը հայ ժողովրդին՝ սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղած պայքարի ծանր տարիներին[60]։ Վերջին տարիներին Գ. Գալոյանի[61] և ուրիշների կողմից զգալի աշխատանք է կատարվել Հայաստանում և Անդրկովկասում սովետական կարգերի հաստատման հարցում բուրժուական պատմագրության կեղծարարությունները մերկացնելու ուղղությամբ։

---

58 Ծ. Աղայան, Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Երևան, 1957։ Նույնի՝ Великий Октябрь и борьба трудящихся Армении за победу Советской власти, Ереван, 1962; Г. Гарибджанян, Коммунистические организации Армении в борьбе за победу Советской власти, Ереван, 1957; Г. Галоян, Борьба за Советскую власть в Армении, М., 1957; А. Эльчибекян, Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении, Ереван, 1959; С. Карапетян, Коммунистическая партия в борьбе за победу Октябрьской революции в Армении, Ереван, 1959; С. Варганян, Победа Советской власти в Армении, Ереван, 1959.

59 Գ. Ղարիբջանյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, Երևան, 1955։ Գ. Գալոյան, Մայիսյան հերոսական ապստամբությունը, Երևան, 1960։ Հ. Կարապետյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, 1920, Երևան, 1961 և այլն։

60 Գ. Ղարիբջանյան, Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի ժողովուրդների ազատագրումը, Երևան, 1960։ Ա. Մնացականյան, Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1963։ Նույնի՝ Посланцы России в Армении, Ереван, 1958։ Բ. Լալաբեկյան, Վ. Ի. Լենինը և սովետական իշխանության հաստատումն ու ամրապնդումը Անդրկովկասում, Երևան, 1961։ Ս. Ալիխանյան, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Երևան, 1964։

61 Г. Галоян, Социалистическая революция в освещении буржуазной историографии, М., 1960.

Սովետահայ պատմագրությունը ակնառու աշխատանք է կատարել նաև հաջորդ պրոբլեմի՝ սոցիալիստական շինարարության նախապատերազմյան տարիների (1921—1941) պատմությունն ուսումնասիրելու և գիտականորեն ընդհանրացնելու գործում։

Հայաստանում սոցիալիստական շինարարության պատմության ուսումնասիրությունն ընթացել է մի քանի ուղղություններով։ Նախ երեք պրակների սահմաններում ստեղծվել է ընդհանրացնող կոլեկտիվ աշխատություն[62]։ Այնտեղ ընդհանուր գծերով ցույց է տրվել սոցիալիստական շինարարության ընթացքը, հանրապետության ինդուստրացման ու գյուղի սոցիալիստական վերակառուցման պատմությունը։

Ուսումնասիրությունների մյուս խումբը նվիրված է սոցիալիստական շինարարության առաջին փուլերի բոլոր հարցերի քննարկմանը, կամ հետաղոտողին հետաքրքրող տարիների ամբողջական պատմությանը։ Այս առումով կարևոր են Ա. Հակոբյանի, Ս. Խարմանդարյանի, Վ. Ղազախեցյանի և ուրիշների աշխատությունները[63]։

Ուսումնասիրությունների երրորդ խումբը նվիրված է սոցիալիզմի շինարարության նախապատերազմյան տարիների առանձին հարցերին։ Նրանց մի մասում վեր է հանված Հայաստանի ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում կոմունիստական կուսակցության դերը[64], մյուսներում լուսաբանվում են բանվոր դասակարգի[65], գյուղացիության[66], Անդրֆեդերացիայի. ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը (Ծ. Աղայան, Վ. Պարսամյան, Ա. Հակոբյան և այլք), կուլտուրական հեղափոխության (Կ. Խուդավերդյան) հարցերը։

1941—45 թթ. Հայրենական պատերազմում հայ ժողովրդի մասնակցության պրոբլեմի վերհանումը սովետահայ պատմաբանների առաջնակարգ ու պատվավոր խնդիրներից մեկն է եղել։ Դեռևս պատերազմի եռուն շրջանում, 1944 թ., ըմբռնելով դրա կարևորությունը, ՀՍՍՀ ԳԱ նախագահության նախաձեռնությամբ պատմության ինստիտուտում ստեղծվում է Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետ, որը մեծ աշխատանք է կատարում հայ ժողովրդի զավակների մասնակցության վավերագրական պատմությունը ստեղծելու, նրանց փաստաթղթերն ու նյութերը հավաքելու գործում։ Հենց պատերազմի տարիներին հրատարակվում են մի շարք գրքույկներ տարբեր ռազմա-

62 Հ. Էլչիբեկյան, Ա. Հակոբյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, պրակ 1, Երևան, 1954։ Վ. Սելիքսեթյան, Հ. Կարապետյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության (1926—1934 թթ.), պր. 2, Երևան, 1958։ Ծ. Աղայան, Ե. Խալեյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության (1935—1945 թթ.), պր. 3, Երևան, 1960։

63 Ա. Հակոբյան, Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925 թթ.), Երևան, 1955։ С. Хармандарян, Армянская ССР в первый год новой экономической политики, Ереван, 1955։ Վ. Ղազախեցյան, Սովետական Հայաստանը մեծ բեկման տարում, Երևան, 1962։

64 Վ. Ներկարարյան, Հայաստանի կոմունիստական պարտիան ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—25 թթ.), Երևան, 1956։ Բ. Օհանջանյան, Հայաստանի կոմունիստական պարտիան գյուղատնտեսության կոլեկտիվացման տարիներին (1930—1934 թթ.), Երևան, 1955 և այլն։

65 Լ. Խուրշուդյան, Հայաստանում սոցիալիստական մրցության պատմությունից (1928—1932), Երևան, 1961 և այլն։

66 Գ. Շարոյան, Սոցիալիստական հողօգտագործումը Հայաստանում (1920—29 թթ.), Երևան, 1962։

ճակատներում ֆաշիստական բարբարոսներին ջախջախելու վճռականությամբ մարտնչող հայ հերոսների մարտական սխրագործությունների մասին։ Հետպատերազմյան շրջանում Ա. Մնացականյանը, Ե. Խալեյանը, Ս. Նալբանդյանը, Ղ. Դալլաքյանը, Ա. Սալխասյանը, Մ. Հակոբյանը և ուրիշներ գիտական հետազոտություններ, հանրամատչելի գրքույկներ ու հիշողություններ հրատարակեցին պատերազմին հայ ժողովրդի մասնակցության, հայկական դիվիզիաների, պարտիզանական շարժման, հայ հերոսների մասին[67]։

Վերջին տասնամյակում շոշափելի աշխատանք է կատարվել հանրապետության ետպատերազմյան տարիների ու կոմունիստական շինարարության ժամանակաշրջանի (1945—1965 թթ.) պատմության լուսաբանման ուղղությամբ։ Ս. Խարմանդարյանի և Ա. Հակոբյանի կողմից ուսումնասիրվել և գիտականորեն ընդհանրացվել են IV և V հնգամյակների[68] ժամանակաշրջանի պատմությունը, ժողովրդական տնտեսության, գիտության ու տեխնիկայի ասպարեզում ձեռք բերված հիրավի խոշոր նվաճումները։ Ետպատերազմյան ժամանակաշրջանի պատմության առանձին հարցերի ուսումնասիրություններից հիշատակության արժանի է Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությանը նվիրված Գ. Գեղամյանի ուսումնասիրությունը[69]։

Հայտնի է, որ նախասովետական Հայաստանը արդյունաբերական տեսակետից ագրարային հետամնաց երկիր էր։ Արդյունաբերական ձեռնարկություններում աշխատող և միաժամանակ գյուղատնտեսության հետ իրենց կապերը չխզած բանվորները աղդաբնակչության ընդհանուր թվի շատ փոքր մասն էին կազմում։ Այդ պատճառով էլ, կարելի է ասել, Հայաստանի բանվոր դասակարգը հիմնականում ձևավորվում է սովետական իշխանության տարիներին։ Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմության այս յուրահատկությունը բացահայտվել է հանրապետության ժողովրդական տնտեսության առանձին փուլերի մասին դրված հետազոտություններում և հատկապես Ա. Գրիգորյանցի և ուրիշների այդ հարցին նվիրված աշխատություններում[70]։

Բանվոր դասակարգի պատմությունը ստեղծելու գործին մեծապես նպաստում և այդ առումով խիստ կարևորություն է ստանում Հայաստանի քաղաքների և գործարանների պատմության ուսումնասիրությունը։ Այդ բնագավառում շոշափելի աշխատանք է կատարվել Կ. Կոզմոյանի և ուրիշների կողմից[71]։

Սովետական Հայաստանի կուլտուրական շինարարության հարցի մասին 1920—1930-ական թթ. առանձին հոդվածներ ու զեկուցումներ են տպագրել ժամանակի այդ բնագավառի ղեկավար աշխատողները։ Հետագայում մոռացության է տրվում կուլտուրական հեղափոխության թեմատիկան։ Վերջին տասնամյակում, սակայն, աշխույժ հետաքրքրություն է սկսվում և Կ. Խուդավերդ-

---

67 Հեղինակների կոլեկտիվ, Գիրք հերոսների մասին, Երևան, 1964։

68 Ս. Խարմանդարյան, Սովետական Հայաստանը IV հնգամյակի տարիներին, 1946—1950, Երևան, 1960։ Ա. Հակոբյան, Սովետական Հայաստանը կոմունիստական շինարարության V հնգամյակի տարիներին (1951—1955), Երևան, 1962։

69 Գ. Գեղամյան, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը սոցիալիզմի վերջնական հաղթանակի ժամանակաշրջանում (1946—1958 թթ.), Երևան, 1968։

70 Ա. Գրիգորյանց, Հայաստանի բանվոր դասակարգը 40 տարում, Երևան, 1960։

71 Կ. Կոզմոյան, Լենինական, Երևան, 1956։ Նույնի՝ Կիրովական, Երևան, 1960։ Նույնի՝ Երևանի Ֆ. Է. Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի 50 տարին, Երևան, 1956։ Նույնի՝ Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան կոմբինատի 5 տարին, Երևան, 1958։ Л. Симонян, Очерки истории экономики и культуры города Еревана, Ереван, 1963.

յանի, Ա. Շահինյանի և ուրիշների կողմից բավական հանգամանորեն ուսումնասիրվում է հատկապես նախապատերազմյան շրջանը[72]։

Սովետական Հայաստանի պատմությունը ուսումնասիրելու համար էական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի պատմության միջնակարգ դպրոցի ձեռնարկի հրատարակությունը[73], ուր թեկուզ խիստ համառոտ, սակայն ամբողջական ձևով, ներկայացվեցին սոցիալիստական ու կոմունիստական ժամանակաշրջանի պատմության բոլոր փուլերն ու կողմերը, տրվեց նրա գիտական պարբերացումը։ Սոցիալիզմի կառուցման նախապատերազմյան տարիների պատմությունը գիտականորեն ընդհանրացվել և խոր ու բազմակողմանիորեն շարադրվել է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կողմից նախապատրաստվող «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի 1967 թ. հրատարակված VII հատորում[74]։

Զգալի աշխատանք է կատարված նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության լուսաբանման ուղղությամբ։ ՀԿԿ պատմության գիտական մշակման հիմքը դրվել է սովետահայ պատմագրության սկզբնավորման առաջին տարիներին։ 1923 թ. ՀԿԿ II համագումարի որոշմամբ ՀԿԿ ԿԿ-ին կից ստեղծված կուսակցության պատմության ինստիտուտը (Կուսպատ) զգալի աշխատանք է ծավալում մարքսիզմ-լենինիզմի կլասիկների գրական վիթխարի ժառանգության հայերեն թարգմանության և ՀԿԿ-ի պատմության հարցերի մշակման ուղղությամբ։ Հրատարակվում են Հայաստանի հեղափոխական շարժման և բոլշևիկյան կազմակերպությունների պատմության մասին առաջին աշխատությունները[75]։

Հետագա տարիներին, անհատի պաշտամունքի պայմաններում անհնարին դարձավ գիտականորեն լուսաբանել Հայաստանի հեղափոխական շարժման և բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցերը։ Միայն ՍՄԿԿ XX համագումարից հետո հնարավորություններ ստեղծվեցին Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության իսկական գիտական ուսումնասիրության, պատմական ճշմարտության վերականգնման և իրադարձությունների ու գործիչների գնահատման հարցերում մարքսիստական մոտեցման համար։

1947 թ. հիմնադրված ՍՄԿԿ ԿԿ-ին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալը որոշակի աշխատանք ծավալեց մարքսիզմ-լենինիզմի կլասիկների և հատկապես Վ. Ի. Լենինի գրական ժառանգության հայերեն թարգմանության ուղղությամբ։ Միաժամանակ հրապարակ եկան Վ. Ի. Լենինի

---

72 К. Худавердян, Культурная революция в Советской Армении, 1920—40, Ереван, 1966; В. Казанджян, Перьые шаги армянской советской культуры, Ереван, 1964; А. Шагинян, Культура Советской Армении, Ереван. 1955.

73 «Հայ ժողովրդի պատմություն», 3-րդ մաս, խմբ. Ա. Հակոբյանի և Ա. Մնացականյանի, Երևան, 1957։

74 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 7, Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը սոցիալիստական շինարարության ժամանակաշրջանում 1917—1941, Երևան, 1967։

75 А. Мясникян, Значение Коммунистической партии Армении, տե՛ս ՀԿ(բ)Կ ԿԿ «Տեղեկագիր», 1922, № 1; С. Лукашин, К вопросу о съезде нашей партии, նույն տեղում։ С. Ханоян, Коммунисты в Армении, «25 лет борьбы за социализм», хрестоматия по истории РКП(б), Тифлис, 1923։ Ա. Մռավյան, Երբ և ինչպես է հիմնադրվել ՀԿ(բ)Կ, տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1923, № 114, 116։

հավատարիմ զինակիցներ ու աշակերտներ Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ա. Մյասնիկյանի, Բ. Կնունյանցի, ականավոր հեղափոխականներ Ա. Մռավյանի, Ա. Խանջյանի, Ա. Կախոյանի, Դ. Տեր-Սիմոնյանի և ուրիշների աշխատությունները։

1950-ական թթ. սկզբներից հրապարակ են գալիս աշխատություններ[76], նվիրված Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Բ. Կնունյանցի, Ա. Մյասնիկյանի, Ս. Տեր-Պետրոսյանի (Կամո), Վ. Կասպարովի, Ա. Մելիքյանի, Մ. Մելիքյանի, Ս. Կասյանի, Ս. Տեր-Դաբրիելյանի, Բ. Ղարիբջանյանի, Ս. Ալավերդյանի, Ս. Մուսայելյանի, Վ. Տերյանի, Ա. Մռավյանի և ուրիշների կյանքին ու գործունեությանը։

ՀԿԿ-ի պատմության առանձին պրոբլեմների մենագրական ուսումնասիրությունները հնարավորություն տվեցին ստեղծելու ՀԿԿ-ի ամբողջական պատմությունը։ 1958 թ. հրատարակվեց «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր» գիրքը, որը Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների պատմության սիստեմատիկ շարադրման առաջին փորձն էր։ 1964 թ. լույս տեսավ «Ուրվագծերի» երկրորդ հրատարակությունը, որտեղ ճշտված է ՀԿԿ-ի պատմության պարբերացումը, նոր ձևով են լուսաբանված կուսակցական շինարարության և պատմության որոշ կարևոր հարցեր։ Առավել մշակված ու ամբողջական է «Ուրվագծերի» երրորդ հրատարակությունը (1967 թ.)։

Հանրապետությունում որոշակի աշխատանք է ծավալվել նաև կոմունիստական երիտասարդության միության պատմության լուսաբանման ուղղությամբ[77]։ Հայաստանի կոմերիտմիության պատմության առանձին փուլերի մշակումը հնարավորություն տվեց ստեղծելու Հայաստանի կոմերիտմիության ամբողջական պատմությունը[78]։

Սովետահայ պատմաբաններն իրենց ավանդն են ներդրել նաև ՍՍՀՄ ժողովուրդների և ընդհանուր պատմության առանձին հարցերի մշակման բնագավառում։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին և հետագայում հրապարակվեցին մի շարք բրոշյուրներ ու գրքեր՝ նվիրված օտար նվաճողների դեմ ռուս և եղբայրական մյուս ժողովուրդների մղած պայքարի հերոսական էջերին[79]։

Անդրկովկասի ժողովուրդների և հատկապես Վրաստանի պատմության առանձին հարցերի լուսաբանման ասպարեզում մեծ երախտիք ունի Լ. Մելիքսեթ-բեկը։ Ադրբեջանական ժողովրդի պատմության առանձին պրոբլեմների լուսաբանման բնագավառում զգալի ավանդ ունի Ծ. Պ. Աղայանը։

Արևմտաեվրոպական երկրների նոր և նորագույն պատմության առանձին պրոբլեմների ուսումնասիրության ուղղությամբ սովետահայ պատմաբանները

---

76 Տե՛ս Վ. Ավետիսյանի, Խ. Բարսեղյանի, Լ. Խուրշուդյանի, Ս. Կալտախչյանի, Ծ. Աղայանի, Գ. Հարությունյանի, Լ. Տեր-Մկրտչյանի, Լ. Աբրահամյանի, Հ. Ինճիկյանի, Ա. Մնացականյանի, Գ. Ղարիբջանյանի, Ա. Հարությունյանի (Հարենց), Լ. Շահումյանի, Ա. Մելքոնյանի, Ն. Արզումանյանի, Վ. Ներկարարյանի, Բ. Օհանջանյանի, Ս. Ալիխանյանի և ուրիշների աշխատությունները։

77 Տե՛ս Հ. Ավետիսյանի և ուրիշների աշխատությունները։

78 «Հայաստանի լենինյան կոմերիտմիության պատմություն», Երևան, 1968։

79 Վ. Ռշտունի, Ռուս և մյուս սլավոնական ժողովուրդների պայքարը գերմանական ագրեսիայի դեմ, Երևան, 1941։ Նույնի՝ Բրուսիլովյան ճեղքումը, Երևան, 1943։ Մ. Ներսիսյան, 1812 թ. Հայրենական պատերազմը և Կովկասի ժողովուրդները, Երևան, 1965 և այլն։

նույնպես որոշակի ծառայություններ ունեն։ Մեծ է Ա. Ռ. Հովհաննիսյանի ավանդը գիտական կոմունիզմի նախակարապետների՝ սոցիալիստ-ուտոպիստների գրական ժառանգության ուսումնասիրության բնագավառում։ Նրա մի շարք ուսումնասիրությունները[80], նվիրված Ռետիֆ-գև-լա-Բրետոնին, Շարլ Ֆուրյեին, XVIII դարի վերջի Ֆրանսիայի առաջավոր հասարակական մտքի պատմությանը, ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին կոմունիստական գաղափարների լուսաբանմանը, լայն ճանաչում և բարձր գնահատական են ստացել սովետական և արտասահմանյան մասնագետների կողմից։

Սովետահայ պատմագրությունը մինչև վերջերս անհրաժեշտ ուշադրություն չէր դարձրել հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասը կազմող հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրության վրա։

Հայկական գաղթավայրերի առաջացումն ու գոյատևումը մինչև մեր օրերը հայ ժողովրդի պատմական զարգացման ուշագրավ ու կարևոր առանձնահատկությունն է, որը պայմանավորված է եղել Հայաստանի տնտեսական ու քաղաքական կյանքի մի շարք յուրօրինակ հանգամանքներով։ Գաղութների կյանքն ու պատմությունը սերտորեն կապված են եղել հայրենիքի հետ, դարձել են նրա անբաժանելի ու կարևոր մասը։ Առանց գաղութահայության պատմության ուսումնասիրության անհնար է հայ ժողովրդի ամբողջական ու գիտական պատմության ստեղծումը, քանի որ դարեր շարունակ երկրից դուրս են գտնվել ոչ միայն հայության հսկայական հատվածները, այլև տնտեսական ու քաղաքական կյանքի կենտրոնները, մշակույթի օջախները։

Գաղութահայության հարցերով ժամանակին զբաղվել են հայ մարքսիստները։ Այսպես, դեռևս 1924 թ. Ալ. Մյասնիկյանը «Կուսակցությունները գաղութահայության մեջ», Ա. Դ. Հովհաննիսյանը «Գաղութահայ խնդիրներ» (1925 թ.) աշխատություններում անդրադարձել են Սովետական Հայաստանի և սփյուռքահայության փոխհարաբերության հարցերին։

ՍՄԿԿ XX համագումարից հետո ուժեղացավ հետաքրքրությունը սփյուռքահայության և հայ գաղութների ուսումնասիրման նկատմամբ։ Գաղթավայրերի պատմության հարցերի ընդհանրացմանը առաջինը ձեռնամուխ եղավ Ա. Գ. Աբրահամյանը։ Նա իր երկհատոր ուսումնասիրության մեջ[81] համառոտակի ուրվագծեց աշխարհի տարբեր մասերում ցրված ավելի քան երեսուն գաղութների պատմությունը։

Մենագրական ուսումնասիրության արժանացան առաջին հերթին ռուսահայ գաղութները, որոնք, ինչպես հայտնի է, հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքում կատարել են առավել նշանակալից դեր։ Վ. Միքայելյանը, Վ. Բարխուդարյանը, Ֆ. Պողոսյանը, Ժ. Անանյանը ուսումնասիրություններ հրապարակեցին Ղրիմի, Նոր Նախիջևանի, Աստրախանի, Գրիգորիոպոլի հայկական գաղութների վերաբերյալ[82]։ XVIII դ. երկրորդ կեսին ռուսահայ հա-

---

80 А. Р. Иоаннисян, Утопия Ретифа-де-ла-Бретон («Известия» АН СССР, 1931, № 2—4); *Նույնի՝* Генезис общественного идеала Фурье, М.—Л., 1939; *Նույնի՝* Шарль Фурье, М., 1951; *Նույնի՝* Коммунистические идеи в годы Великой французской революции, М., 1966.

81 *Ա. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հատ. Ա, Երևան, 1964, հատ. Բ, 1967։*

82 *Վ. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964։ Վ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1967։ Ֆ. Պո-*

սարական-քաղաքական ու մշակութային կյանքի կարևոր դրվագներ են լուսաբանվել Վ. Դիլոյանի աշխատության մեջ։

Շոշափելի աշխատանք է կատարվել նաև Ուկրաինայի հայ գաղթավայրերի պատմության լուսաբանման ուղղությամբ[83]։ Այս բնագավառում խիստ կարևոր նշանակություն ունեցան երկու հանրապետությունների գիտությունների ակադեմիաների պատմության ինստիտուտների համատեղ գիտական երեք սեսիաները՝ նվիրված Ուկրաինայի հայ գաղութներին ու հայ-ուկրաինական պատմական կապերին, և հոդվածների արժեքավոր ժողովածուները[84]։

Նկատելի հետաքրքրություն է դրսևորվել նաև արտասահմանի հայ գաղթավայրերի նկատմամբ։ Դրանց մեջ առաջին հերթին հիշատակության արժանի են Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների հայ ղանգվածների պատմությունը հետազոտելու ուղղությամբ կատարվող աշխատանքները։ Ուսումնասիրվել է լեհահայ գաղութի XV—XVIII դդ. պատմությունը։ Բուլղարիայի հայ գաղթավայրերը և հայ-բուլղարական պատմական կապերը լուսաբանվել են Ս. Հովնանյանի, իսկ բուլղարահայ հեղափոխական շարժումների և մամուլի պատմության հարցերը՝ Ռ. Խաչատրյանի աշխատություններում[85]։ Համանման ձևով ուսումնասիրվել են ռումինահայ (Ս. Քոլանջյան), հունահայ (Պ. Կոկինոս) գաղութները, հայ-հնդկական կապերն ու հնդկահայ գաղթօջախները (Ռ. Աբրահամյան)[86]։

Սովետահայ պատմագրությունը զգալի աշխատանք է տարել նաև ժամանակակից սփյուռքահայ կյանքի հրատապ առանձին պրոբլեմները մշակելու ուղղությամբ։ Նկատելի են մասնավորապես արտասահմանյան հայկական կուսակցությունների ու կազմակերպությունների պատմությունը շարադրելու ասպարեզում կատարված աշխատանքները։ Այս թեմատիկայով գրված գրքերից ուշագրավ են մասնավորապես Լ. Խուրշուդյանի և Հ. Սիմոնյանի աշխատությունները[87]։

Հարկ է նշել, որ ցարդ չկա ժամանակակից սփյուռքահայ կյանքի ամբողջական պատկերը ներկայացնող որևէ ուսումնասիրություն։ Հասկանալի է, որ հայ գաղթավայրերի և սփյուռքահայության պատմության ուսումնասիրությունը առաջիկայում ավելի է ծավալվելու։

Այսպիսով, սովետահայ պատմագիտությունն իր սկզբնավորումից մինչև օրս ձեռք է բերել նշանակալից հաջողություններ հայ ժողովրդի պատմության պրոբլեմների մշակման բնագավառում։ Սակայն նրա առջև կանգնած և լուծ-

---

ղոսյան, Աստրախանի հայոց դատաստանագիրքը, Երևան, 1967։ Աստրախանի գաղութի մասին տես նաև Ա. Յուխտի և Վ. Խաչատրյանի գիտական հոդվածները։ Ж. Ананян, Армянская колония Григориополь, Ереван, 1969.

83 Я. Р. Дашкевич, Армянские колонии на Украине в источниках и литературе XV—XIX вв., Ереван, 1962.

84 «Исторические связи и дружба украинского и армянского народов», сб. статей, Ереван, 1961, Киев, 1965 (երրորդ ժողովածուն գտնվում է հրատարակման պրոցեսում)։

85 С. В. Овнанян, Армяно-болгарские исторические связи, Ереван, 1968; Ռ. Հ. Խաչատրյան, Արտասահմանյան հայ կոմունիստական մամուլի պատմությունից, Երևան, 1960։

86 Р. Абрамян, Армянские источники XVIII в. об Индии, Ереван, 1967.

87 Լ. Խուրշուդյան, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964։ Հ. Սիմոնյան, Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Երևան, 1969։

ման ենթակա հարցերը էլ ավելի ծավալուն են և կարևոր։ Հանրապետության պատմաբանների մոտակա խնդիրն է ավարտել ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ձեռնարկած «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակը, ուր անցյալի պատմագրության հարուստ ժառանգության, մասնավորապես սովետահայ պատմագրության հաջողությունների ընդհանրացումով պետք է բացահայտվեն հայ ժողովրդի պատմության զարգացման յուրահատկություններն ու օրինաչափությունները։